

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԵՇԵՆՅԱՆ, REVIEWS

Տաթևիկ Հայրապետյան, Ներքաղաքական գործընթացները Ադրբեջանում 1988-1998 թվականներին, Երևան, ԵԴՀ հրատարակչություն, 2018, 178 էջ:*



ԵԴՀ պատմության ֆակուլտետի կոլկասագիտության բաժնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Տաթևիկ Հայրապետյանի մենագրությունը նվիրված է 1988-1998 թթ. Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակի հիմնական առանձնահատկություններին, իշխանություն-ընդդիմություն պայքարի խորքային պատճառներին, ներհիշխանական ու ներընդդիմադիր ճամբարներում առկա բավմաթիվ հակասություններին, ինչպես նաև Ադրբեջանի ներքաղաքական գործընթացների ու դարաբաղյան ճակատում ընթացող ռազմական գործողությունների փոխներգործությանը:

Գիրքը բաղկացած է երեք գլխից, ունի ներածություն, երակացություններ և օգտագործած աղբյուրների ու գրականության ցանկ: Ներածությունում ներկայացված են արծարծվելիք խնդիրների շրջանակը, հիմնական սկզբնաղբյուրները, պատմագիտական կամ հրապարակախոսական այն աշխատությունները, որոնք հիմք են ծառայել հեղինակի համար՝ քննարկելու

ներքաղաքական գործընթացներն Ադրբեջանում 1988-1998թթ.-ին: Անկասկած, մեծ է նշված խնդիրների արդիականությունն ու հրատապությունը այն պայմաններում, երբ դեռևս Արցախյան հակամարտության էջը փակված չէ հայերիս և, առավել ևս, ռևանշիստական տրամադրություններով համակված ադրբեջանցիների համար:

Տ. Հայրապետյանն իրավացիորեն և տրամաբանական շարադրանքով բացահայտում է այն երևույթը, որ 1980-ական թթ. երկրորդ կեսին՝ «վերակառուցման» քաղաքականության շրջանում, ազգայնականության վերելքն Ադրբեջանում տեղի էր ունենում XX դարասկզբին կոլկասյան թաթարների ազգային ինքնագիտակցության ձևավորման և ազգային գաղափարախոսությունների հայեցակարգային փոխակերպումների նմանությամբ ու օրինակով: Նա բավականոմանիորեն լուսաբանում է վայրիվերումների մի փուլ, որը նշանավորվում է թե՛ խորհրդային Միության փլուզմամբ և նախկին հասարակարգի ճգնաժամով և թե՛ ծայրամասներում կենտրոնախույս նկրտումների աճով, ապագայի նկատմամբ անորոշությամբ ու ազգային ելքերի փնտրտությամբ:

Հեղինակը մանրամասն ներկայացնում է Ադրբեջանի ժողովրդական ճակատ (ԱԺԾ) կուսակցության ձևավորման, կազմավորման, ներքին խմորումների, գաղափարական ու մարտավարական թևերի և բուն գործունեության պատմությունը: Դա ինտրավորություն է ընձեռում հասարակությանը՝ ծանոթանալու ոչ միայն զուտ Ադրբեջանում կուսակցականաշինության գործընթացներին, այլև այդ համատեքստում հետևելու զուգահեռաբար թե՛ ճացող քաղաքական, գաղափարական խմորումներին, ըմբռնելու ադրբեջանական ազգայնականության էությունն ու առանձնահատկությունները, հակահայկականության ուժգնությունը, արտահայտման ձևերը,

* Գրախոսությունը ներկայացվել է 22.04.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

Ինչ խոսք, Վարմանայի է նաև տողերիս հեղինակի գրքի¹¹³¹ շրջանցումը, որն, ի դեպ, Տ.Յայրապետյանն է գրախոսել ու բարձր գնահատել¹¹³²։ Ընդ որում, առաջին գլխում նա անդրադառնում է հենց այն հարցերին, որոնք քննարկված են վերոնշյալ աշխատությունում և առնչվում են XIX դարավերջի ու XX դարասկզբի «կովկասյան թաթարների» ինքնությանը, ազգայնականության դրսևորումներին, ազգային առաջնորդների մոտեցումներին ու գործունեությանը։ Ի դեպ, այդ ուսումնասիրությունում տողերիս հեղինակն առաջին անգամ է գիտականորեն շրջանառել բազմաթիվ թեկեր ու ձևակերպումներ։ Օրինակ, իսլամականությունից դեպի թյուրքականություն, իսկ այնուհետև՝ «ադրբեջանականություն» անցման փուլերն առաջին անգամ հստակ ժամանակագրորեն բաժանվել ու սահմանվել են այն եպոքյաներով, որոնք օգտագործում է Տ. Յայրապետյանը¹¹³³։

Փոխարենը, նա բազմիցս անհարկի հղում է անում ադրբեջանցի պատմաբան Ա. Բալաևին, որի հակապատմական տեսակետները հանգամանորեն քննադատել են իմ գրքում։ Այսպես, Տ.Յայրապետյանը, հղելով նրան, գրում է. «1905-1907թթ. հեղափոխական շարժումների ժամանակ ի հայտ եկած ադրբեջանական քաղաքական կազմակերպությունները խնդիր էին դնում պայքարելու ոչ թե ադրբեջանցիների՝ որպես ինքնաբավ էթնիկ ամբողջության ազգային իրավունքների, այլև Կովկասի բոլոր մահմեդականների իրավունքների համար»¹¹³⁴, ինչը բնական էր, քանի որ «ադրբեջանցի» էթնոս գոյություն չուներ» (էջ 20)։ Բայց չէ՞ որ նույն Ա.Բալաևին ես մանրամասն քննադատել եմ հենց «ադրբեջանական էթնոս» եպոքյան սխալ ու ժամանակավրեպ կիրառելու համար։ Ցավոք, մեկանում դեռևս չի ձևավորվել այն գիտակցությունը, որ անվստահելի սկզբնաղբյուրներն ու գրականությունն առատորեն հղելն ինքնըստիներյան լայնացնում է այդ գրքերի գործածության շառավիղը կամ հղման ինդեքսը (индекс цитирования)։ Միաժամանակ հայ հեղինակի գիտական օբյեկտիվ աշխատության շրջանցումը հղի է ծանր հետևանքներով մեր հայրենի գիտության վարճացման տեսանկյունից, առավել ևս՝ հայ-ադրբեջանական պատմագիտական ընդհարման համատեքստում։ Չավելեմ, որ Ա. Բալաևը առ այսօր իմ քննադատությանը չի արձագանքել։

Սեկ այլ օրինակ ևս՝ կապված ադրբեջանցի հեղինակներին անհարկի հղելու հետ։ Երբ Տ. Յայրապետյանը գրում է, որ «1937 թ. «թուրք» եպոքյան փոխարինելու եկավ «ադրբեջանցի»-ին» (էջ 24) և հղում է ադրբեջանցի Յուսուֆ Ըզջելիկի (Yusuf Özcelik) փոքրածավալ մի հոդված¹¹³⁵, ապա թյուր տպավորություն է ստեղծվում, թե նա է այդ իրականում անստույգ տեսակետի հեղինակը։ Մինչդեռ նրա հոդվածի հրապարակումից առաջ լույս են տեսել գիտական ավելի ծանրակշիռ աշխատություններ, որոնցում հանգամանորեն ներկայացված են ադրբեջանցի ինքնանվանման փոխակերպումները։ Ավելի նախընտրելի կլիներ վկայակոչել թեկուզ ԽՍՀՄ մարդահամարի տվյալները կամ հանրագիտարանային տեղեկությունները և անհարկի չտարածել նրա հոդվածը։ Նույնը կարելի է ասել հետևյալ պարբերության վերաբերյալ. «Ազգության և լեզվի իմաստով «Ադրբեջան» անվանումը սկսեց կիրառվել խորհրդային կարգերի հաստատումից հետո, և միայն 1937 թ. այն ստացավ պաշտոնական կարգավիճակ, իսկ «թուրք» եպոքյան արգելվեց» (էջ 24)։ Այս անգամ ևս Տ. Յայրապետյանը հղում է ադրբեջանցի հեղինակ Ֆ. Էլեկբարովի (Faig Ələkbərov)՝ 2012

¹¹³¹ Варданян Т., Азербайджанцы: история одного незавершенного этнопроекта (историко-этнологический очерк), М., 2012.

¹¹³² ՏԷՍ «Յայրապետյանի հարցեր», 2014, թիվ 2, էջ 233-235:

¹¹³³ Варданян Т., նշվ. աշխ. էջ 66:

¹¹³⁴ Балаев А., Мамед Эмин Расулзаде (1884-1955), с. 15.

¹¹³⁵ Yusuf Özcelik, The Development and Establishment of Political Identity in the Republic of Azerbaijan // EuroKaukAsia, Euxeinos 9 (2013).

թ. համացանցում վետեղված կես էջանոց և գիտական ապարատից չուրկ կյուրթ¹¹³⁶: Եթե կյուրթ՝ աղբբեջաներենից թարգմանությունը ճիշտ է, ապա Ֆ.Էլեկբարովի միտքն է սխալ, քանի որ խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո լեզվի ու ազգի նկատմամբ «Աղբբեջան» ելբը չի կիրառվել¹¹³⁷: Իրականում, «աղբբեջանցի» ինքնանվանումը պաշտոնապես դրվել է շրջանառության մեջ ոչ թե 1937, այլ 1939 թվականին: Ինչպես նկատել է Գ. Ստեփանյանը, «1937 թ. հունվարի 6-ի համամիութենական մարդահամարի պաշտոնական կյուրթերում թյուրքալեզու բնակչությունը դեռևս նշվում էր թյուրք անվամբ... Աղբբեջանում 1930-ական թվականների անձնագրավորման ժամանակ, երբ համատարած կերպով «աղբբեջանականացվեց» թյուրքալեզու բնակչությունը, 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարում նոր միայն ի հայտ եկավ և պաշտոնապես ամրագրվեց աղբբեջանցի անվանումը»¹¹³⁸:

Ամփոփելով նշենք, որ աղբբեջաներենին (կամ որևէ այլ օտար լեզվին) տիրապետելու պարագան պետք է օգտագործել նպատակային ու արդարացված, այլ ոչ թե ի հաշիվ հայկական սկզբնաղբբյուրների ու գիտական գրականության: Պատմագիտության ասպարեզում նույնպես ընթանում է անթաքույց հայ-աղբբեջանաթուրքական հակամարտություն, ուստի դրան մասնակցության հայտ ներկայացնելու դեպքում պարտավոր ենք օգտագործել հայ պատմաբանների գործերը և Է՛լ ավելի վարգացնելու դրանցում առաջադրված գիտական անաչառ թեկերը: Ցավոք, Տ.Հայրապետյանի գրքում մի կողմից՝ շրջանցված են հայ պատմագիտության ձեռքբերումները, մյուս կողմից՝ անտեղի հիշատակության են արժանանում աղբբեջանական, աղբբեջանամետ անվատախելի սկզբնաղբբյուրներն ու կեղծ-գիտական գրականությունը:

Հուսով ենք, որ նշված առաջարկներն ու դիտողությունները կշտկվեն Տ.Հայրապետյանի գրախոսվող աշխատության երկրորդ հրատարակությունում՝ հետխորհրդային Աղբբեջանի պատմությանը նվիրված այս հանգամանալից հետազոտությանը հաղորդելով առավել մեծ գիտական արժեք:

Թամարա Վարդանյան,

Երևանի պետական համալսարանի դասախոս,
Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական
համալսարանի Երևանի մասնաճյուղի տնօրեն,
պատմական գիտությունների թեկնածու,
Vardanyan.TR@rea.ru

¹¹³⁶ Biz kimin varisiyik: Milli Azərbaycanın, yoxsa Sovet Azərbaycanı? <http://modern.az/articles/21059/1#gsc.tab=0>, 11.02.2012.

¹¹³⁷ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Варданян Т.**, նշվ. աշխ., էջ 43:

¹¹³⁸ **Ստեփանյան Գ.**, Բաբու բաղաբի հայության պատմությունը. Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն, Երևան, 2011, էջ 69: Ст'ս նաև Всесоюзная перепись населения 1937 г.: краткие итоги, М., 1991, с. 94, Всесоюзная перепись населения 1939 г.: основные итоги, М., 1992, с. 71:

Tatevik Hayrapetyan. *Internal Political Processes in Azerbaijan in 1988-1998.* Yerevan: Yerevan State Un-ty Press, 2018, 178 pp.

Tatevik Hayrapetyan's monograph is devoted to the peculiarities of the internal political processes in Azerbaijan in 1988-1998 as well as the reasons for the confrontation of the opposition with the government against the background of the Karabakh conflict.

The book utilizes widely the vast relevant information in mass media, including in the Azerbaijani language. In her presentation of the record of the given historical period, the author thoroughly outlined the history of the formation of the Popular Front of Azerbaijan (PFA) and its intra-party ideological and tactical differences.

The drawback of the book under review is that Hayrapetyan, in fact, has bypassed many of the major achievements of Armenian academic thought on this topic. Furthermore, abundant references to the pseudo-scholarly works and propaganda opuses by Turkish and Azerbaijani authors are often presented without the necessary clarifications. There are also cases of uncritical use of the works by some biased Western researchers.

Tamara Vardanyan,

Assistant Professor at Yerevan State University,
Director of Yerevan branch of Plekhanov
Russian University of Economics,
PhD. in History

Татевик Айрапетян. *Внутриполитические процессы в Азербайджане в 1988-1998 гг.,* Ереван, изд-во ЕГУ, 2018, 178 сс.

Монография к. и. н. Айрапетян посвящена особенностям внутриполитических процессов в Азербайджане в 1988-1998 гг. и причинам конфронтации оппозиции с властью на фоне Карабахского конфликта.

В книге широко использована богатая информационно-публицистическая литература, в том числе и на азербайджанском языке. В ходе представления хроники данного исторического периода автор обстоятельно изложила историю формирования Народного фронта Азербайджана (НФА), внутрипартийных идеологических и тактических разногласий.

Недостатком рецензируемой книги является то, что Айрапетян, фактически, обошла стороной многие крупные достижения отечественной научной мысли по данной тематике. Кроме того, обильные ссылки на лженаучные труды и пропагандистские опусы турецких и азербайджанских авторов зачастую представлены без необходимых разъяснений. Есть также случаи некритического использования работ некоторых ангажированных западных исследователей.

Тамара Варданян,

преподаватель Ереванского государственного университета,
директор Ереванского филиала РЭУ им. Г.В. Плеханова,
кандидат исторических наук